## 151. ԾԻՑԱՎ ԿԸԿՑԱ...

*Մին մարթ քյնա՛մ ա մին կնգան կոշտ, թա էն դումյան ըմ կյամ, քու հա՛ր տըեսալ ըմ, տասլ ա սըղացալ ըմ, բայց շորեր չո-նեմ, թող շորերըս ղարկեն, կյենա՛մ, կյամ։ Էտ կնեգյը յոր ա օնում ի՛րա՛ն մարթին շորերը ղարկում, էտ մարթն էլ շորերը չիլա՛կում ա, հըե ինո՛ւմ։ Կնգանը մարթը կյամ ա տոն, կնեգյը ինվա՛ծ պենը նաղլ ա անում։ Մարթը մաննը կծում ա, կլխու վա ինգյո՛ւմ, վըեր կնգանը քյա՛լագյ ըն հկալ։ Հրցընում ա, թա՝ հիշտըղա՞վ քյինա՛ց։ Կնեգյը թա՝ էսհինչ հըղըցավը։ Տա եր ա կենում, ծին լիհա՛րո՛ւմ, նստում, հըե ինո՛ւմ։ Քյինա՛մ ա, քյինա՛մ, էն շորերը տանողը հը-ըցանա ուրվամ ա։ Ծին քշո՛ւմ ա, վըեր հըսնե, էն մարթը դա՛ստին գյո՛ւղո՛ւմ ա պենը հինչումն ա, նի յա մննում հըղըցեն կոխկեն մին ճեղաց, մին քյո՛ւրքյ կլխեն քցո՛ւմ, շորերն ան իրեսը մխըրե ա՛լ-րո՛ւտ անում, տո՛ւա կյամ ծիյըվերերեն առաչը։ Ծիյավուրը տրան հրցընում ա, թա ըստեղավ մարթ չի քյինա՞ց, տա թա՝ հենց էս սըհաթես նի մտավ ճեղացը։ Էտ մարթը ծիյան վըեր ա կյամ նի մննում ճեղացը, վար շոռ կյա՛ քթենա՛, տա ծին նստում ա, հըե ինո՛ւմ։ Էտ մարթը ճըղացան տո՛ւս ա կյամ, տըեսնում ծին կավուչ։ Եր ա կենում տերտակ քյինա՛մ տոն, կնեգյը հրցընում ա, թա պա հո՞ր ա՞ ծին, մարթը թա՝ քընծա՛հա՛ր, պա քու հա՛ր էն դումյան փըլյադա յա՞ կյիլա՛կան։*